

«ՌՈՒՍԿԻ ԱՐԽԻՎ» ԵՎ «ՌՈՒՍԿԱՅԱ ՍՏԱՐԻՆԱ»  
ՀԱՆԴԵՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ  
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19-րդ դարի ուսական մասուլում քիչ չեն Հայաստանին և հայոց պատմության հարցերին նվիրված հրատարակումները: Այդ նյութերի զգալի մասը գրված է նոթերի և ուղղակի հուշագրությունների տեսքով: 19-րդ դարի առաջին կեսին այդ առումով առանձնանում է, քանի որ Հայաստանը դարձել էր ուս-պարսկական և ուս-թուրքական պատերազմների թատերաբեմ: Ռուսական մամուլում զետեղված են այդ պատերազմների մասնակիցների հուշերը: Դրանք առաջին հերթին ուս սպաների ու զորապետների հուշերն ու նոթերն են, և ընդհանրապես հաջողված այս կամ այն ուղղության օպերացիայի նկարագրումն ու փառաբանումը: Ասենք նաև, որ հրատարակման այս ձևն ամենից տարածվածն էր և ամենից հաճախ էր հանդիպում ուսական մամուլում: Ստույգ կներկայացնենք ուսական մամուլից քաղված այն նոթերը, որոնք, կարծում ենք, պատմագիտական տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Նրանց մեջ զգալի թիվ են կազմում ուս-թուրքական և ուս-պարսկական պատերազմներին վերաբերող հրատարակումները: Իրենց արժեքով հատկապես առանձնանում են Կովկասին քաջածանոթ Նիկոլայ Նիկոլաևիչ Մուրավյով-Կարսկու հուշերը, որոնք կարգացվում են մեծ հետաքրքրությամբ և առաջին հերթին աչքի են ընկնում իրենց հավաստիությամբ: Ն. Մուրավյովը, հավանաբար, «Ռուսկի արխիվ» ամսագրի ամենից կարգացվող հեղինակներից է եղել և գրանով է բացատրվում նրա հուշերի ամբողջական ու հաջորդական զետեղումը:

Այսպես, «Ռուսկի արխիվ» ամսագրի 1877 թվականի մարտյան համարում զետեղված է «Ն. Ն. Մուրավյով—Կարսկու նոթերից. ուսական զորքեր: Կողմից Կարսի ամրոցի առաջին գրավումը» հուշագրությունը: «Վայրերը, սրտեղով մենք անցնում էինք,— գրում է գեներալը,— ոչ մեծ բարձրություններով ընդարձակ հարթավայրեր էին... Հողը բարեբեր էր, կիրով հարուստ, դաշտերը լավ մշակված էին: Գյուղերի բնակիչները, որոնք մեծամասամբ հայեր էին, տեղահանվել էին թուրքական իշխանությունների հրամանով՝ մեր նկատմամբ ունեցած վերաբերմունքի համար»<sup>1</sup>: Ռուս գեներալը խոստովանում է, որ «այս երկու ժողովուրդների (նկատի ունի հայերին և թուրքերին—Չ. Հ.) հարաբերությունները արմատապես փոխվեցին պատերազմի բռնկման ժամանակներից սկսած»<sup>2</sup>: Հուշագրությունում Ն. Մուրավյովը ներկայացնում է Կարսի առման մանրամասն նկարագրությունը և վերլուծությունը:

Պատմագիտական առումով, սակայն, առավել հետաքրքրություն են ներկայացնում 1816 թվականից սկսվող հուշերի շարքը: Պարբերականում այդպես էլ ներկայացվում են՝ «Ն. Ն. Մուրավյովի նոթերը» և համապատասխան թվականը: Այսպես, «Ռուսկի արխիվի» 1886 թվականի հունվարյան համարում զետեղված է «Ն. Ն. Մուրավյովի նոթերը: Պարսկական դեսպանություն» հուշագրությունը: Հեղինակն ինքը Ս. Նրմուլովի պարսկական դեսպանության անդամներից մեկն էր և, բնականաբար, նկարագրվող բոլոր դեպքերի ալա-

1 «Русский архив», 1877, № 3, с. 315.

2 Նույն տեղում, էջ 320:

նատեսը: Ե. Մուրավյովը ներկայացնում է դեսպանության ողջ ընթացքը, մանրամասն տալիս է Լոռու, Գարաքիլիսայի, Համամյուլի, Կյուսրիի, էջմիածնի վանքի նկարագրությունները, որոնք ճանաչողական արժեք ունեն: Ահա ուշագրավ մի քանի քաղվածքներ. «Ճաշից հետո,— գրում է ն. Մուրավյովը,— ևս ներկայացուց պատրիարքին, որն արհեստից ինձ և շափազանց սիրալիր էր ինձ հետ: Պատվարժան այս ծերունին մեծ սարսափ ուներ պարսիկներին, որոնք հաճախ թալանում և անկարգություններ էին կատարում վանքում. նրա կյանքը ամեն րոպե վտանգի մեջ է... էջմիածնի նշանավոր վանքը, որը գոյություն ունի արդեն 1500 տարի, ևս մասնամասն կնկարագրեմ իմ հաջորդ այցելությունների ժամանակ... Ես մեծ ցանկություն ունեի տեսնել նաև հայոց հիմնադրույթ մայրաքաղաք Անիի ավերակները, սակայն ստիպված էի հետաձգել իմ մտադրությունը՝ մինչև երջանիկ հանգամանքներ... (ընդգծումը—Ղ. Ղ.)»:

Ե. Մուրավյովն այնուհետև ներկայացնում է Ա. Երմոլովի դեսպանության ողջ անձնակազմը, որից պարզ է դառնում, որ հայերից այդ դեսպանության մեջ եղել են դեսպանության քարտուղար Ալ. Խուզաբաշյանը, դեսպանության կազմակերպիչ, սեմյոնովյան դեպի շտաբս-կապիտան Վ. Բեհրովսկի, տասներկու-րորդը նշված է պոպոպուշիկ Վ. Մադաթովը: Հետաքրքիր է նաև ն. Մուրավյովի մյուս դրառումը. «Թիֆլիսից վեց օրվա ճեղքում հետևաբար հետո, Ալեքսեյ Պետրովիչը (Երմոլովի—Ղ. Ղ.) մոտ եկավ Մաճմեղ-Ղուլի խանը, որը փախել էր Երևանից: Նա գլխավոր հրամանատարին առաջարկեց իրեն հանձնել Երևանի մարզը, քանի որ նրա բնակիչները դժգոհ են պարսկական կառավարությանց և նրան ճանաչում են որպես իրենց խան: Գլխավոր հրամանատարը այդ ժամանակ չէր կարող ընդունել այդ առաջարկը. նա համոզեց Մաճմեղ-Ղուլի խանին սպասել իրենց վերադարձին և ուղարկեց նրան Թիֆլիս, որտեղ նրան մեծ թողակ նշանակեցին»<sup>3</sup>: Առաջին հայացքից ն. Մուրավյովի այս դրառումը կարելի է ճանապարհորդական սովորական դիպվածք համարել: Սակայն հարցի մեջ մի փոքր խորանայու դեպքում ավելի պարզ են դառնում դեսպանության երկու կողմերի մտադրությունները. պարսիկ խաներն արդեն լիովին հասկացել էին, որ ռուսների առաջխաղացումը դեպի Արաքս գրեթե անկասելի է և վաղ թև ուշ նրանք ստիպված կլինեն համակերպվել այդ իրողության հետ, իսկ Երմոլովը՝ եթե շահադրվի շահին համոզել այդ տարածքների կամավոր հանձնման մեջ, ապա զոնև դրանցում կառավարի: նշանակել «իրենց մարդկանց»:

Ե. Մուրավյովը օր առ օր նկարագրում է դեսպանության ողջ ընթացքը: Երկրորդի ճանապարհին նա մանրամասն նկարագրում է Նախիջևանը, Խոր-Վիրապը, Դավալուն և վերջում, ինչպես և խոստացել էր, տալիս է էջմիածնի վանքի պատմությունը: Ամսագրի 1886 թ. մայիսյան համարում շարունակվում է ն. Մուրավյովի նոթերի հրատարակումը: Ուշագրության է արժանի հեղինակի հետևյալ դրառումը. «Երևանի բնակիչները,— գրում է Մուրավյովը,— չէին հավատում, որ մենք Պարսկաստանի հետ հաշտություն ենք կնքել: Նրանք անհամբեր սպասում էին այն օրվան, երբ մենք նրանց կաղատենք պարսկական լծից: Ողջ Երևանի մարզը մեկ նվիրված է. այս լուրը հաստատվեց նաև բոլոր կողմերից»<sup>4</sup>:

Ե. Մուրավյովի նոթերը շարունակվում են նաև ամսագրի հաջորդ համարներում: 1886 թ. № 9-ում ներկայացվում են 1818 և 1819 թվականները: Վերջինում հեղինակն, օրինակ, գեներալներ Ախվերդովի, Արղայիսյան-երկայ-նարպետի մասին գրառումներ է կատարել, որոնցում հանդիպում ենք նաև մեր պատմագրությանը քիչ հայտնի կամ էլ ընդհանրապես անհայտ անունների՝ Կարգանով, Երմոլովին սղեկցող հայ Պետրովիչ, լեյք-գվարդիական Կի-

3 Նույն տեղում, 1886, № 1, էջ 470, 472:

4 Նույն տեղում, էջ 475:

5 Նույն տեղում, էջ 476:

6 Նույն տեղում, № 5, էջ 14:

րասիրյան գնդի պարետ, Գնդապետ Պավել Մովսեսի Նելիքով, հայ Մուրադով և այլն: Ն. Մուրավյովը պատմում է նաև, որ բանակցությունների ժամանակ գլխավոր հրամանատարը հաճախ էր գիմում հայ Պետրովիչի օգնությունը: Ամսագրի 1888 թ. հուլիսյան համարում Ն. Մուրավյովի 1821—1822 թթ. վերաբերող հուշերում գրառումներ կան նաև Վ. Մադաթովի մասին:

Նոյննրում բավականին հանգամանորեն են ներկայացված հայկական քաղաքները, բնակավայրերը, դրանց բնակիչները, վերջիններիս զբաղմունքը, ռազմական մեծ ու փոքր կարևորություն ներկայացնող իրադարձությունները: Այսպես, հանդեսի 1888 թ. հոկտեմբերի և նոյեմբերի համարներում տպագրված նոյննրը վերաբերում են 1824—1826 թվականներին: Մեր կարծիքով, հետաքրքրությունից զուրկ չէ նաև հեղինակի հեռակալ դրսևումը: «Ծս տեսել եմ Երմուղով: անկումը, Պասկևիչի բարձրացումը, Դիբլիշի ամեն գնով ցարի կամքը կատարելու յանկուծությունը, ծառայություն և՛ կատարել բոլոր երեք գլխավորների մոտ, ժամանակ առ ժամանակ լսել միմյանց մասին նրանց զեկույցներն ու միմյանց նկատմամբ վերաբերմունքը, սակայն ցավ ես ունեցել այն անարդարությունների համար, երբ սխալներով պատված մի մարդու (նկատի ունի Պասկևիչին—Հ. Հ.) պաշտելի և մեծ են ներկայացնում»<sup>8</sup>:

Ն. Մուրավյովն այնուհետև բավականին մանրամասն նկարագրում է Միրաքի, Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Եվ արդյոք նոր բան չունեն ավելացնելու պատմագիտությանը հայտնի փաստերին Ն. Մուրավյովի այս նոյննրը. «Հուլիսի 16-ի առավոտյան,—գրում է նա,—թշնամին մեծ ուժերով երևաց Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ: Հայերը, որոնք կազմում էին այս գյուղի բնակիչների մեծամասնությունը, պատրաստվեցին պաշտպանության և իրենց սպասվող վտանգի մասին տեղեկացրին Գյումրի, որտեղ գտնվում էր փոխգնդապետ Դեխտերևը՝ թիֆլիսյան զնդի իր շորս գումարտակներով»<sup>9</sup>: Ն. Մուրավյովը հաստատում է, որ հենց վերջինս դանդաղկուտության պատճառով «ձաշին մոտ, երբ արդեն Փոքր Ղարաքիլիսայի բնակիչները զրեթե ոչնչացված էին, Դեխտերևը մոտեցավ զժբայտ գյուղին և կանգ առավ նահանջող թշնամուց բավականին հեռավորության վրա և նրանց կողմն արձակեց մի քանի թնդանոթային արկեր... թշնամին իր հետ տարավ ողջ ավարը՝ համոզված լինելով, որ շի հետապնդվի, իսկ Դեխտերևը վերադարձավ Գյումրի»<sup>10</sup>: Ն. Մուրավյովը մանրամասն նկարագրում է պարսիկների կատարած վայրագությունները. «Ըրբ պարսիկները ներխուժեցին գյուղ, սկսեցին իրենց անասելի մտրատությունները. սրախողիող էին արվել մանուկներ, ծերեր, բռնաբարվել աղջիկներ, հագուրդ տվել իրենց անմարդկային և վայրենի վարքին»<sup>11</sup>: Հեղինակը շի մոռանում նշել Փոքր Ղարաքիլիսայի իսկական հերոսներին. «Հայերի տասը ընտանիքներ, որոնք պատսպարվել էին մի քանի տնեռում, հերոսաբար պաշտպանվեցին և դիմացան մինչև Դեխտերևի ժամանումը: Պարսիկները ես բազմաթիվ զոհեր ունեին: Հայերին գլխավորում էր Սարգիսը՝ քաջարի, սակայն հասարակ մի մարդ: Նա ինձ մոտ գտնվեց 1827 թվականի ողջ արշավանքի ընթացքում. ես նրան շքանշանի արժանացրի»<sup>12</sup>:

Ն. Մուրավյովի նոյննրում պարսիկ խաների դեմ ընդգծված ատելություն կա, սակայն որպեսզի համոզվենք նրա կողմից ներկայացվող ղեկավարի անկողմնակալ նկարագրության մեջ, բերենք հեռակալ գրառումը. «Երևանի սարգարի եղբայր Հասան խանը գլխավորում էր սահմանային զորքերը և մեզ համար դա անսպասելի ներխուժում էր: Այս դահիճը, որի

7 Նույն տեղում, էջ 35:

8 Նույն տեղում, 1888, № 11, էջ 399:

9 Նույն տեղում, էջ 416:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, էջ 416—417:

12 Նույն տեղում, էջ 417:

վարքն ամբողջովին իրախախտած է արյունով, վաճուց արդեն հայտնի է իր դատանություններով: Այս պատերազմում էլ նա իր այս փառքը շատերեցրեց, սակայն արդարամտությամբ պետք է նշել նրա ռազմական հմտությունը, արագաշարժությունն ու գործողությունների վճռականությունը: Իսկ ղեկավարության տակ ունենալով միայն անկանոն հեծելազոր, որն ի գործուչէր և ոչ մի կարևոր ձեռնարկում կատարելու, սակայն քրդերի հետ Փոքր Ղարաքիլիսա գյուղի վրա հարձակման ժամանակ ցուցադրեց բացառիկ արագաշարժություն: Նա աչքի էր բնկնում հատկապես պարտիզանական պատերազմում<sup>13</sup>: Ն. Մուրավյովը միաժամանակ չի մոռանում նշել, որ Հասան խանին Փամբակում և Շորագյալում զգալի աջակցություն էին ցույց տվել տեղի թուրքերը: Մյուս կողմից, հեղինակն ընդգծում է, որ «ամենից շատ սուլթանի հայերը, որոնց մեծ մասն անողորմաբար ոչնչացվեց՝ մոտ 300 ընտանիք»<sup>14</sup>: 1831 թ. սեպտեմբերյան համարով ավարտվում է Ն. Մուրավյովի ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի մասին պատմող նոթերի հրատարակումը, որը նվիրված էր 1827 թվականին: Նրանում մանրամասն կարագրված և քննարկված է ռազմական գործողությունները սղջ ընթացքը: Նոթերն ավարտվում են Երևանի բերդի քրավման նկարագրությամբ:

Այս ամենի լույսի ներքո ուղղակի անհասկանալի է մնում այն, որ Ն. Մուրավյովի անունը դուրս է մնացել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պատմագրությունից: Պատմաբանների ուշադրությունից տվյալ դեպքում անտեսվել է այնպիսի մի բնույթավառ, ինչպիսին հուշագրություններն են: Թուսական մամուլի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ նրանում հայոց պատմությանը վերաբերող հրատարակումների մեջ ավելի մեծ տեղ են գրավում հուշագրությունները, քան հատուկ հոդվածները: Ն. Մուրավյովի նոթերը փոքրիկ էպիզոդներ նկարագրող հուշեր չեն միայն, այլև ժամանակաշրջանը և իրարարձությունները բնութագրող պատմական տեղեկատվություն:

Հայաստանին և հայոց պատմությանը վերաբերող նյութերը հաճախ ուղղակի տարալուծված են ամենատարբեր ընդլայն հրատարակումներում, որոնք առաջին հայացքից թվում է թե առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում, սակայն դա միայն առաջին հայացքից: Այսպես օրինակ, պարսկականի 1866 թ. համարներից մեկում 1812 թ. հայրենական պատերազմի պարտիզանական շարժման հերոս գեներալ «Գ. Դավիդովի թղթերից» հուշագրությունում հրատարակված են վերջինիս՝ կոմս Ա. Ա. Զակրևսկուն ուղղված նամակներից մի քանիսը: 1827 թ. օգոստոսի 31-ին Գ. Դավիդովի դրած նամակում Պասկևիչի անվաչել վարքի մասին ասված է. «Ժամանելով Վրաստան, ես կատարեցի այն, ինչ հանձնարարված էր: Զախչախեցիներ և արտաքսեցիներ թշնամուն, ավելին, դուրս եկանք Պարսկաստանի սահմանները: Գեներալ Պ-ն (Պասկևիչի մասին է խոսքը—Ն. Հ.) ճիշտ է, ձեռք բերեց 1100 գերի, սակայն ինչպե՞ս և ո՞ւմ շնորհիվ, հարցրու այդ մասին Մադաթովին, որի անունն այդ գործում շտեմանք: Զեզ մոտ կարող է նա (Պասկևիչը—Ն. Հ.) դեռևս հերոսի կերպարանք ունենալ, քանի որ ելիզավետպոլի գործն առայժմ հայտնի չէ, իսկ ահա վրաստանում այդ մասին գիտեն պարզ և հստակ. Վելյամինովը և Մադաթովն ամեն ինչ արեցին: Պ-ն միայն իր անունը դրեց այդ գործի վրա»<sup>15</sup>: Համարում տպագրված է նաև Գ. Դավիդովի մի բանաստեղծություն, որը մինչ այդ հրատարակված չի եղել. Բանաստեղծությունը վերնագրված է՝ «Քաղցած շունը»:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Նույն տեղում, 1866, № 1, էջ 911:

և ստորև բերվող քառատողը հուշում է, որ հեղինակը նկատի ունի թուրքերին.

Адрианополь  
 Без битв у ног.  
 Константинополь  
 В году тревог...  
 Что ж ты, зевака,  
 Повесил нос?  
 Хватай собаку,  
 Голодный пес!

«Ռուսկի արխիվում» ղետեղված են գեկաբերիստ Ա. Գանգբելովի ընդարձակ հուշերը, որոնցում բերված են ռուս-պարսկական պատերազմից շատ դրվագներ: Հեղինակն, օրինակ, պատմում է, թե ինչպես են իրենց դիմավորել Ուրմիայի հայերը. «Անցնելով Ուրմիայի գյուղերից մեկի մոտով, — գրում է նա, — մեզ դիմավորեց ժողովուրդն՝ իր հոգևորականի գլխավորությամբ... Երբ մտանք գյուղ, սկսեցին ղողանջել եկեղեցու զանգերը...»<sup>16</sup>: Հետևյալ գրառումը ևս հետաքրքրությունից զուրկ չէ. «Հաշտության բանակցությունների ընդհատման ժամանակ մեր ջոկատը մոտեցավ Ուրմիային: Քաղաքի մոտակայքում մեզ ներկայացավ մի հայ, տակավին երիտասարդ և մոտենալով գեներալին, նրան դիմեց ֆրանսերենով՝ առաջարկելով իրեն որպես արաբերենի և սլարոսկերենի թարգմանիչ: Ես ներկա էի գեներալի և հայի միջև կայացած խոսակցությանը: Այս վերջինն իրեն կոչում էր խաչատուր բեյ, որը մեզ հավաստիացրեց, որ ...Ուրմիայի բնակիչները բարեկամաբար են տրամադրված մեր հանդեպ, բացառությամբ որոշ մարդկանց...»<sup>17</sup>:

Պարբերականի 1888 թ. օգոստոսյան համարում ուշադրություն են գրավում ֆելիդարշալ, իշխան Ա. Բորյատինսկուն (հետագայում Կովկասի կառավարիչ) նվիրված Ա. Զիսերմանի հուշերը: Հայտնի է, որ վերջինս որոշ ժամանակով փոխարինեց հիվանդության պատճառով բացակայող Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին: Ա. Զիսերմանը ուշագրավ փաստեր է հաղորդում, որոնք վկայում են Մ. Վորոնցովի սրտացավ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հեղինակը գրում է, որ Մ. Վորոնցովը, երբ իմացավ, որ թուրքերը Բայազետից հարձակում են սկսել էջմիածնի ուղղությամբ, «արցունքներն աչքերին, դիմելով Միրսկուն (Մ. Վորոնցովի համհարզը, հետագայում ռուս նշանավոր գեներալ—Հ. Հ.), ասաց հետևյալը. Ես Ձեզանից մեծ գոհություն եմ ինդրում: էջմիածինը հարկավոր է փրկել, սակայն այդ մասին այստեղից կարգադրություն անելը ոչ միայն անհնար է, այլև նույնիսկ վտանգավոր: Դուք գործին տեղյակ եք, իսկ Բորյատինսկին Ձեր նկատմամբ մեծ վստահություն ունի: Գնացեք Ալեքսանդրապոլ, բացատրեք նրան մեր նպատակներն ու ցանկությունները...»

Իշխան Միրսկին, — շարունակում է Զիսերմանը, — անմիջապես ճանապարհ ընկավ և հաջող օրն արդեն Ալեքսանդրապոլում էր: Ղարաքիլիսայից սկսած, ժողովուրդն արդեն տագնապի մեջ էր. սահմանակից գյուղերի բնակչությունը բաշխվել էր և քրդերի հարձակումների հետևանքով թողել էր իր բնակավայրերը. Հայկական շատ գյուղեր թալանված էին, բնակիչները՝ սպանված: Սարսափելի տեսարան էր...»<sup>18</sup>: Ա. Զիսերմանի ներքոբերյալ գրառումը ևս հետաքրքրությունից զուրկ չէ. «Բորյատինսկին լսել անգամ չէր ուղում էջմիածնին օգնական ուժեր ուղարկելու մասին...: Եթե դուք այստեղ եք ուղարկվել (Միրսկու մասին է խոսքը—Հ. Հ.) գլխավորի

16 Նույն տեղում, 1886, № 5, էջ 241:

17 Նույն տեղում, էջ 242:

18 Նույն տեղում, 1888, № 8, էջ 467—468:

կողմից, որպեսզի ինձ փոխարինեն, ապա ցույց տվեք կարգադրությունը և ես կենթարկվեմ, իսկ եթե այն Ձեզ մոտ չկա, ապա դուք ինքնակոչ եք ու բռնարար և ես Ձեզ կզնդակահարեմ... իշխան Միրսկին շատասխանեց և ոչ մի բառ Քիչ հետո,— շարունակում է Ձիսերմանը,— երկարատև լռությանից հետո Ա. Ի. Բորյատինսկին մոտեցավ Միրսկուն, սեղմեց նրա ձեռքը և ասաց. դուք իրավացի եք, էջմիածինը հարկավոր է փրկել: Հուսով եմ, որ դուք չվիրավորվեցիք... Այս դեպքում վիրավորանքը տեղ չունի,— պատասխանեց Միրսկին<sup>19</sup>: Հեղինակը հաստատում է նաև այն իրողությունը, որ եթե չլիներ այդ միջամտությունը, Երզնկայի վաղուց արդեն թալանի ենթարկած կլինեին էջմիածինը, բանի որ նրանք օգնական ուժերի շարժվելու մասին տեղեկանալու պես արագ եւ դարձան իրենց ճանապարհից<sup>20</sup>:

Ա. Ձիսերմանը մանրամասն նկարագրում է նաև ռազմական դործողությունների հետագա ընթացքը: «Քողերը մտան հայկական դյուղերը, և սկսեցին թալանն ու կոտորածը: Գյուղերից մեկում կանանց և երեխաների աղետալի ճիշը ստիպեց կազակներին շատուկ օգնություն, սակայն նրանց սկսեցին շարժվել շրջապատեցին երկու հազարի հասնող թուրքեր... Տեղի ունեցավ արյունալի բախում: Մեր կուրանցիները կեցցեհն,— գրում է Ձիսերմանը,— փրկեցին դյուղը և իրենց»<sup>21</sup>: Ա. Ձիսերմանի այս հրապարակումներից տեղեկանում ենք նաև, որ Քյուրուկղարայի ճակատամարտի նախօրեին կայսր Երկույսը փոքր-ինչ զժգոհություն էր հայտնել Բեհբուսթովի անվճարականության համար. «...Կայսրը խորը ափսոսանք հայտնեց, որ իշխան Բեհբուսթովը ոչ միայն չի ձեռնարկում վճարական գործողություններ, այլև իր հայացքը ուղղում է... դեպի ետ»<sup>22</sup>: Սակայն որպես իրական ապացույց, Ձիսերմանը մանրամասն նկարագրում է Քյուրուկղարայի ճակատամարտը, որակելով այն որպես «նշանավոր դեներալի նշանավոր ճակատամարտերից մեկը: Իշխան Բեհբուսթովը,— գրում է նա,— խելացի և կրթված անձնավորություն էր: Իր կուսումը լինելով գերազանց կազմակերպիչ, նա գիտեր հաղորդակցվել զինվորի հետ և հոգալ նրա մասին, արժանի և սիրալիր էր վերաբերվում նաև սպանների հետ»<sup>23</sup>: Հեղինակը գրառում ունի հայազգի ծովակալ Սերբբրյակովի մասին, նշելով, որ կուսումը Ղրիմի ճակատում, հայազգի զորականը կազմել էր մի ծրագիր, որով նախատեսում էր «հանկարծակի հարձակումով գրավել Բաթումը, Առդաճանը, նույնիսկ Տրապիզոնը և ծովից օդնակուն ուժեր ուղարկել»<sup>24</sup>:

«Ռուսկի արխիվ» 1891 թ. մի բանի համարներում ուշադրության արժանի են Ա. Ֆուլեևի հուշերը, որոնցում հեղինակը պատմում է Անդրկովկասից ստացած իր տպավորությունների մասին: Հուշերից մեկում Ա. Ֆուլեևը, օրինակ, պատմում է Բաքվի մեծահարուստ Արշակունու մասին. «Չկնորսական արտելում ինձ դիմավորեց ձկնարդյունաբերության կառավարիչ Արշակունին... Ակնհայտ էր, որ Արշակունին բավականին ջանասիրությունը և գործարարությունը էր հոգացել իր ընկերության բարգաւաճման համար: ...Այս առևտրական մարդու հոգին թվում էր, թե ամբողջովին կրանված է ամեն տեսակ հաշվարկներով ու հաշիվներով, սակայն նա տարված էր նվիրական մի զաղափարով. հասունանում էր թանկագին մի երազանք: Այդ երազանքը՝ ողջ Անդրկովկասի համար արտասովոր ու դարմանահարաշ շինություն կառուցումն էր»<sup>25</sup>:

19 Նույն տեղում, էջ 468:

20 Նույն տեղում, էջ 469:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, № 10, էջ 226:

23 Նույն տեղում, էջ 227:

24 Նույն տեղում, № 8, էջ 467:

25 Նույն տեղում, 1891, № 12, էջ 456—457:

Ամսագրում զետեղված է Ն. Ֆ. Սամարինի «Ասիայում առևտրի ընդհանուր տեսությունը: Կոմս Վ. Ա. Զուբովի նոթերը: Տողվածը: Այստեղ էլ վերնագիրը կարծես թե քիչ բան է ասում, սակայն ընթերցելով հողվածն ամբողջությամբ, աչնուհանդերձ, հանդիպում ենք արժեքավոր ընդգծումների: Օրինակ, կոմս Վ. Զուբովի նոթերից մեկը վերնագրված է առպես՝ «Կասպից ծովի ափերի մասին, որոնք վերաբերում են Պարսկաստանի հետ առևտրին»: Վ. Զուբովը գրում է. «Մեծ Եկատերինայի կողմից Պարսկաստան զորքեր ուղարկելը թելադրված չէր հաղթանակների ունայնությամբ և ոչ էլ մեր սահմանների ընդարձակումով, որն առանց այն էլ ամենից ընդարձակն էր կայսրությունների մեջ, այլ գիշատիչ Աղա Մահմեդ խանին պատժելու համար, որն այդպես հանդիսավորությամբ վիրավորեց նրա պատվախնդրությունը: Միաժամանակ նպատակ կար պաշտպանել Ռուսաստանի տիրակալի հովանավորությունը խնդրած Վրաստանին, իսկ գլխավորը՝ Պարսկաստանի հետ մեր առևտրի հարցն էր: Կայսրուհու մահը խանգարեց նրա մեծ մտադրություններին իրագործմանը... Վրաստանը, շարունակում է Զուբովը, ներկայումս իրենից ոչինչ չի ներկայացնում և ի վիճակի չէ սեփական ուժերով պաշտպանել նույնիսկ իր գոյությունը և միայն ժամանակավորապես է կարողանում իրեն վրիճել վերջնական կործանումից... Ապագա ժամանակներում մեր հարաբերությունները պետք է խարսխվեն ոչ այնքան այդ ժողովուրդներին մշտական հալածանքներից ու թալանից վրիճելու ուղղությամբ, որքան նրանց միջոցով Պարսկաստանի հետ առևտուր կազմակերպելու համար և այդ տեսակետից Վրաստանը մեզ համար դերկարևոր խնդիր է ներկայացնում: Ես պետք է ասեմ, շարունակում է նա, որ Ռուսաստանի ընթացիկ շահերից է բխում մեր սահմանները մինչև Քուռ և Արաֆս գետերը հասցնելու անհրաժեշտությունը (ընդգծումը մերն է—Ղ. Ղ.): Արաքսով ընկած տարածքները՝ նախիջևանը, Երևանը և Վրաստանի թագավորությունն իրենց մեջ կընդգրկեն բարեբեյ հողեր և մի քանի միլիոն քրիստոնյա բնակչություն»<sup>26</sup>:

Անդրադառնալով Հայաստանին, Զուբովը գրում է. «...Հավատի տեսակետից բարեկամական հարաբերություններ պետք է հաստատել Արարատյան պատրիարքարանի հետ, որն, ինչպես հայտնի է, բավականին ուժեղ ազդեցություն ունի հայ ժողովրդի մեջ և կարող է դառնալ Ռուսաստանի հավատարիմ դաշնակիցը, որին պարտական է իր գոյությամբ և երջանկությամբ՝ այդ երկրների (Թուրքիայի և Պարսկաստանի—Ղ. Ղ.) նկատմամբ հսկիչի դեր կատարելու համար: Արդյունքում, եզրակացնում էր Զուբովը, այդ հողերը Ռուսաստանի համար ուժեղ և ամուր հենարան և հարստությունների նոր աղբյուր կդառնան: Ահա, իմ կարծիքով, միակ ճշմարիտ ուղին՝ Կասպից ծովում առևտուրը կայացնելու համար»<sup>27</sup>: Այս Զուբովը ներկայացնելով իր ծրագրերը, այն համեմտում է Ասիայի հին պատմության դրվագներով, ապացուցելու, թե ինչպիսի պատերազմներ ու կռիվներ են մղել նրա համար աշխարհակալ տերությունները: Նրա նոթերը արժեքավոր են ինչպես պարսկական արշավանքի պատճառները, այնպես էլ Եկատերինա կայսրուհու արևելյան քաղաքականությունը ընկալելու համար:

Ուշագրավ նյութ է պարունակում նույն ամսագրում զետեղված «Մովակալ Զիլագովի նոթերից. Թուրքիայի հարցը 1812 թ.» հողվածը: Ծիշտ է, նոթերի մեծ մասը վերաբերում են 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի բալկանյան իրադարձություններին, սակայն ուշադրության արժանի է, օրինակ, հեղինակի հետևյալ դրառումը. «Անձամբ ինձ անհանգրստացնում էր Բուխարեստի պայմանագրի վավերացման ձգձգումը: Ես գիտեի, որ սուլթանը հատկապես տատանվում է այն հողվածների հարցում, որոնք վերաբերում էին Ասիական Թուրքիայում որոշ տարածքների

26 Նույն տեղում, 1875, № 5, էջ 888—889:

27 Նույն տեղում, էջ 889:

դիջումներին: Զարմանքով իմացա, որ Ստրատֆորդ Կաննինգը (անգլիական գործակալ Քուրքիայում—Չ. Չ.), որը պետք է համագործակցեր մեզ հետ, ընդհակառակը, իր ողջ ազդեցությունը զործադրեց խանգարելու սուլթանին՝ համաձայնվելու հաշտության այդ կետերի հետ: Նա մոռանում էր ներկա և ընդհանուր վտանգը (նկատի ունի նապոլեոն Բոնապարտին—Չ. Չ.) և մտածում էր միայն այն մասին, թե ինչ վտանգ կբերի Անգլիային՝ Անգրիկովկասում ռուսների ամրանալու: Այսպիսին է Անգլիայի քաղաքականությունը՝ գաղութներին սպասվող ամենափոքր վտանգն անգամ ստիպում է նրան փոխելու իր արտաքին քաղաքականությունը և զոհելու իր շահերի համար՝ նաև իր դաշնակիցներին»<sup>28</sup>: Մովակալը բավականին դիպուկ է իր այս խորհրդածությունում:

«Ռուսկայա ստարինա» հանդեսի 1874 թ. մի քանի համարներում ղեկավարած են Կլյուկի-Ֆոն Կլյուգենաուի «Կովկասում ռազմական գործողությունների ակնարկ. պատերազմը Պարսկաստանի և Քուրքիայի դեմ 1826—1829 թթ.» ուղագրով նոթերը: Գեներալ-լեյտենանտ Կլյուկի-Ֆոն Կլյուգենաուն անմիջական մասնակցություն է ունեցել ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին և ն. Մուրսավյուլի նման թողել է այդ պատերազմների մասին պատմող ընդարձակ նոթեր: Հեղինակը մանրամասն ու հստակամտորեն նկարագրում է այն ճակատամարտերը, որոնց ինքն անձամբ մասնակցել է: Ահա ուղագրով մի քանի քաղվածքներ նրա նոթերից: Տեղեկանալով Շուշիում տիրող ծանր իրավիճակի մասին, Կլյուգենաուն գնդապետ Ռեուտին ուղղված հրամաններից մեկում օրինակ, գրում է. «Մեծահոգաբար լիբարներվեք հայերի հետ և նրանք Ձեզ հավատարիմ կծառայեն»<sup>29</sup>, հվ պպա. «Քաջարի գեներալ Մադաթովը, որն իր առաջավոր ջոկատով գտնվում էր Ղազախում, կարողացավ տարանջատել թշնամու 10 հազարանոց կորպուսը, որը դուրս էր եկել Ելիզավետպոլից՝ Աբաս-Միրզայի որդի Մահմեդ-Միրզայի և նրա մորեղբայր Ամիրխան սարգարի գլխավորությամբ: Իշխան Մադաթովը 1826 թ. սեպտեմբերի 3-ին, լույսը բացվելուն պես, շոտվեց ղեպի Շամխոր գետը... Գործը վճռվեց մի ակնթարթում. պարսիկները ջարդվեցին և փախուստի դիմեցին: Թշնամու ողջ կորպուսը վերածվեց անկանոն փախչող մի ամբողջի և վախից շարժվեցավ նույնիսկ Ելիզավետպոլի հասնելը»<sup>30</sup>: Ելիզավետպոլի ճակատամարտի մասին նա գրում է. «Առաջին դժի հրամանատար իշխան Մադաթովը մերկացրեց սուրը, որն էլ համընդհանուր հարձակման հրամանի ազդանշան ծառայեց. սրբնթաց հարվածով նա ճեղքեց կենտրոնը և պարսկական ողջ բանակը անկանոն հահանջեց ղեպի Քյուրակչայ, որտեղից այդպես հանդիսավորությամբ և համողմածությամբ եկել էր...»<sup>31</sup>: Նոթերը, որոնք հրատարակման չէր պատրաստել ի. Գրեգորովսկին, հաղորդում են, որ Կլյուգենաուն հետագայում որոշ ժամանակով ստացավ Ղառաբադի կառավարչի պաշտոնը: Հեղինակը հաղորդում է նաև, որ նա հոգ է տարել «հայկական այն ընտանիքների համար, որոնք ուժով տարվել էին Պարսկաստան: Նրանք բարեհաճող վերադարձան և տեղավորվեցին իրենց նախկին տեղերում»<sup>32</sup>:

Ամսադերը 1876 թ. «Իշխան Պլատոն Զուբով. կենսագրական ակնարկ» նոթերում մասնավորապես նշում էր. «Մեծ մարտ դառնալու ձգտումը իշխան Պլատոն Ալեքսանդրովիչի մեջ հղադրեց մե նախագծի ստեղծում, որն իրենից բավականին հեռու թողեց Պետրովիչի «հունական նախագիծը». 1794—1795 թթ. Պետրովիչի նախագիծը առգեև պատրանք էր դարձել սր. Կոստանդինի թագավորության վեոականդումը սրբերով ընդունվեց հվ-

<sup>28</sup> Նույն տեղում, 1870, էջ 1544.

<sup>29</sup> «Русская старина», 1874, с. 144.

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 151.

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 499.

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 502.



րուպական տերութիւնները կողմից, իսկ Ռուսաստանի յուրաքանչյուր վորձ առաջ էր բերելու գինոված հակամարտութիւն: Զուբովի պլանի էութիւնը կայանում է նրանում,—ասվում է ակնարկում,—որպեսզի Վալերիան Զուբովը Ռուսաստանը Հնդկաստանի հետ հաղորդակցութիւն հաստատելու համար գրավի առևտրական կարևոր ուղիները՝ Պարսկաստանից մինչև Տիբեթ... Այդ նույն ժամանակ Սուվորովը Բալկաններով կշարժվեր դեպի Ադրիանապոլիս և թուրքական մայրաքաղաք: Այս պլանի իրագործումը նախատեսված էր սկսել 1796 թ. և արդեն գնում էին նախապատրաստական ուղիատանքները...»<sup>33</sup>:

Նույն թվականի դեկտեմբերյան համարում շարունակվող հողվածն այս անգամ արդեն նվիրված էր բուն պարսկական արշավանքին: Ստորև բերվող բաղվածքները թեև հայոց պատմության հետ անմիջական կապ չունեն. սակայն, նրանք լրացնում և բուխագրում են կարևորութիւն ներկայացնող պարսկական արշավանքը: «Զուբովի նախագիծը որոշված էր ի կատար ածել, կաղմակերպելով արշավանք դեպի Պարսկաստան և որի իրագործումն առաջարկվել էր Սուվորովին, քանի որ «նա մեծ վստահութիւն էր վայելում»: Սուվորովը,—շարունակվում է այնուհետև ակնարկում,—ներկայացրեց այն գեներալների ցուցակը, որոնց ցանկանում էր իր հետ վերցնել արշավանքի ընթացքում: Սակայն ի դարձան շատերի, այդ ցուցակում նրանք չդասան ոչ կոմս Վալերիան Զուբովին և ոչ էլ նրա եղբորը՝ Նիկոլային, որը Սուվորովի փեսան էր...»<sup>34</sup>: Այնուհետև նկատի ունենալով իրագործութիւնների հետագա ընթացքը, հեղինակը գրում է. «Այդ ժամանակից հինգ շաբաթ անց (1796 թ. փետրվարին),—ասվում էր այնուհետև ակնարկում,—Սուվորովը հրաժարվեց ընդունել զորքերի հրամանատարութիւնը, որոնք նախատեսված էին պարսկական արշավանքի համար: Գլխավոր հրամանատար նշանակվեց Վալերիան Զուբովը: Ժամանակակիցների կկալութիւնը նա շատ էր ցանկանում աչքի ընկնել, չունենալով սակայն ոչ փորձառութիւն և ոչ էլ հմտութիւն, որը պահանջվում էր պատերազմը վարելու համար, հատկապես, երբ իրագործութիւնների հետևանքով այն կարող էր ստանալ սպառնալից դրութիւն»<sup>35</sup>: Ուշադրութիւն արժանի է նաև ակնարկում ընդգծվող հետևյալ միտքը. «Մեր բոլոր կենսագրական ակնարկներում և հարեանական պատմութիւնն ուսումնական ձեռնարկներում, Կովկասում Վ. Զուբովի սիրանքները նկարագրվում են համարյա թե այնպես գունագեղ, ինչպես Դերժալինի ձոնում է (վերջինս Դերբենդը գրավելու կապակցութիւնում հատուկ ձոն նվիրեց Վ. Զուբովին—Հ. Հ.): Սակայն ժամանակակից կոմս Ռոստոպչինի վկայութիւնով, որը կարող է և Վ. Զուբովի ռազմական շնորհքների մասին խիստ գնահատողի տպավորութիւնն թողնել, այնուհանդերձ, պարսկական այս արշավանքն այնքան էլ նշանավոր չեղավ...: Լուրեր էին տարածվում, թե իբր մեր զորքերը պետք է ապավինեն Պետրոս Մեծի կանխորոշումներին, այսինքն՝ Բաքվի և Դերբենդի ամրացումով իրենց ձեռքը վերցնեն մետաքսի ողջ առևտուրը, որ կատարվում էր Հնդկաստանից և Թուրքիայից հայերի միջոցով»<sup>36</sup>:

Պատմագիտութիւն մեջ ընդունված ուսակետ է պարսկական արշավանքի դադարեցումը բացառապես կապել Յկատերինա կայսրուհու մահվան և Պավել I-ի գահակալութիւն հետ: Կենսագրական այս ակնարկում, սակայն, այլ կերպ է բացատրվում պարսկական արշավանքի դադարեցումը, որն ի դեպ հեռու չէ իրականութիւնից: Այդ առումով ուշադրութիւն են արժանի հետևյալ տողերը. «Այնուհանդերձ,—ասվում է ակնարկում,—երկու ամիս անց (կայսրուհու մահից քիչ առաջ) ռազմական դրութիւնը Անդրկովկասում բավականին հեռու էր հուսադրական համարվելուց: Բանա-

<sup>33</sup> Նույն տեղում, 1876, № 10, էջ 462:

<sup>34</sup> Նույն տեղում, № 12, էջ 690—691:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 691:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 695:

կը գտնվում էր Բարձրի մատուցներում... Սկզբի համար կոմս Վ. Ջուբովին արամադրվել էր 3 մլն. ոտուրլի, որ նա կարող էր տնօրինել առանց հաշվառության: Սակայն որպեսզի գտնվեր այդքան գումար և փակվեին այդ հսկայական ծախսերը, երկրում մտցվեց նոր գնացուցակ, որն արագորեն հաստատվեց՝ Վ. Ջուբովին արամադրվող գումարը հետագայում հասցվեց մինչև տարեկան 8 մլն. ոտուրլու, շնայած այն հանգամանքին, որ երկրի վրա այն ծանր անդրադարձավ. շաբաթի փոխք հասավ 10 ոտուրլու, երբ նախկինում այն արժեք բնդամենը 23 ոտուրլի»<sup>37</sup>: Իսկ այժմ բերենք ակնարկի զլխավոր ընդդժումը. «Հապճեպությունը և շմտածվածությունը, որով նշանավորվեց Վ. Ջուբովի պարսկական արշավանքի ողջ պլանը, շուշացրեց հատուցվել իր դատն պտուղներով և ինքը՝ Դերբենդի նվաճողը, շէր կարող չգիտակցել, որ իր գրությունը կովկասում համարյա թե ծանր էր Հեռավոր Արևելքին իր սակայ սարերով լիովին անհասանելի գտնվեց մեր դորքերի համար, երանք ոչ պարենով էին ապահովված, և ոչ էլ թիկունքից պաշտպանված. նրանց սպասնում էին լեռնականներն ու պարսից զորքը: Պ. Ջուբովի նախադի իրականացումը զարձավ անհնարին, քանի որ այն սպանչում էր հսկայական ծախսեր, միլիոնավոր ոտուրլիներ և հարյուր հարանոց բանակ»<sup>38</sup>:

Այսպիսով, պարսկական արշավանքի զաղարկյուր ոչ միայն Եվրասերինա կալարուհու մահվան և Պավել I-ի դահակալության հետևանք էր, այլև արշավանքի հապճեպ նախապատրաստության և նրա ընթացում ծագած բազում դժվարությունների արդյունք: Այդ ևն հաստատում նաև Վ. Ջուբովի՝ իր եղբորը՝ Պ. Ջուբովին ուղղված նամակի հետևյալ տուրլը, որը նույնպես բերվում է ակնարկում. «Վ. Ջուբովը սարսափահար եղած կովկասի բնական արգելքներից, այդ մասին մանրամասն հաղորդում էր եղբորն ու աղերսում. «Ապահովիր ինձ պարենով, մատակարարիր ինձ աշնան համար նախատեսված զորքերով և գաիր դրա համար համապատասխան միջոցներ,—գրում էր Վ. Ջուբովը,—ամեն ինչ ընթանում է շափազանց դանդաղ... մենք ալտակ ըրավականին ևս ենք մնացել քո կամխատեսումներից (ընդդժումը մերն է—Ն. Ն.). ահա այն, ինչ որ ցանկանում էիր գիտենալ»<sup>39</sup>:

Այսպիսով, ռուսական մամուլում զետեղված հարուստ նյութերը հիմք են տալիս նոր երանգներ հաղորդելու հայոց պատմության առանձին հարցերի բնութագրությանը, նյութեր, որոնց մի մասը արխիվալին վավերագրերի արժեք ունի:

ЖУРНАЛЫ «РУССКИЕ АРХИВ» И «РУССКАЯ СТАРИНА» О  
ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОМ ПОЛОЖЕНИИ АРМЕНИИ  
В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XIX в.

ԱՊՂԱՅ ՕԳԱՆԵՅԱՆ

Р е з ю м е

В русской периодической печати XIX в. есть немало публикаций, посвященных Армении в ее истории. Значительная часть этих материалов написана в виде записок и воиных мемуаров. Особенно выделяется в этом отношении первая половина XIX в., когда Армения стала ареной русско-персидских и русско-турецких войн. Речь идет о записках и мемуарах русских военачальников и офицеров, принимавших участие в этих войнах. Особенно выделяются публикации двух авторитетных русских журналов—«Русского архива» и «Русской старины». В статье рассмотрены материалы выше упомянутых журналов, которые представляют оцределенный научный интерес.

37 նույն տեղում, էջ 695—696:

38 նույն տեղում, էջ 696:

39 նույն տեղում: